

«ՄԱՅՐԵՆԻ ՊԱՇՏՊԱՆ» ՇԱՐՔԻՑ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏՈՆ ԿՐԱՍՆՈՂԱՐՈՒՄ

Մայիսի 5-ին Կրասնոդարում կայացավ հայագիտության երկրամասային 7-րդ բաց օլիմպիադան: Այն անցկացվեց Կրասնոդարի երկրամասի «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության երկրամասային մասնաճյուղի հովանավորությամբ (նախագահ Կամո Հայրապետյան, անաջին փոխնախագահ Աբրիկ Մանասյան) և նույն մասնաճյուղի կրթության բաժնի ղեկավար Կարինե Եսայանի ջանքերով:

Այդ օրն իսկական տոն էր: Քաղաքի լավագույն հյուրանոցներից մեկը՝ «Crowne Plaza»-ն, իր հյուրընկալ հարկի տակ էր հավաքել Կրասնոդարի երկրամասի տարբեր ուսումնական հաստատությունների 12-17 տարեկան շուրջ 100 աշակերտի, որոնք մրցում էին հայոց լեզու, հայ մշակույթ,



մասնակցում էին երկրամասի երգի, պարի լավագույն համույթները: Ռոստովից Տաթևիկ Սահակյանը և Լիանա Կոբեյանն արժանացան համապատասխանաբար I և III կարգի պատվոգրերի և նվերների, իսկ մյուս մասնակիցները, ուսուցիչները պարգևատրվեցին շնորհակալագրերով, խրախուսական նվերներով: — Բազմազգ Կուրբանում հայ համայնքն իր ուրույն տեղն ու դերն ունի: Շնորհակալություն այս հրաշալի օրվա համար, — ասաց Կրասնոդարի երկրամասի ազգերի մշակույթի կենտրոնի նախագահ Կասիլի Զարբան:

գրականություն, պատմություն, կրոն անարկաներից: Առաջին անգամ օլիմպիադային իրենց մասնակցությունն ունեցան նաև Դոնի Ռոստովի լրացուցիչ կրթության կենտրոնի «Արևիկ» խմբակի աշակերտներ Տաթևիկ Սահակյանը (ուսուցչուհի Ծովինար Մարգարյան), Արտակ Ասլիկյանը (ուսուցչուհի Արմինե Հովսեփյան) և Սուրբ Խաչ եկեղեցուն կից հայերենի խմբակի աշակերտներ Լիանա և Լիլիթ Կոբեյանները, Արթուր Մանասարյանը (ուսուցչուհի Արմինե Ղազարյան): Նախասարգիում ՌՀՄ-ի երիտասարդ կամավորները Անի Գևորգյանի գլխավորությամբ, ազգային տարագներով, ժպտադեմ դիմավորում էին հյուրերին և ուղեկցում հայկական տաղավար: Հայկական տաղավարում նրանց դիմավորում էին կազմակերպիչները: Հնչում

ների ուսուցչուհի, բազմաթիվ ուսումնական ձեռնարկների, դասագրքերի հեղինակ Կարինե Եսայան (նախագահ), Կուրբանի վաստակավոր մանկավարժ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրեֆեսոր Ռոբերտ Գալուստով, պատմական գիտությունների թեկնածու, ՌԴ Արմավիր քաղաքի ինդուստրիալ շինարարական քոլեջի պատմության դասախոս Սերգեյ Գուրոկյան, Լովոտոսիսկ քաղաքի «Լույս» մշակույթային կենտրոնի հայոց լեզվի ուսուցչուհի Աելիտա Միրաքյան) արձանագրում էին օլիմպիադայի արդյունքները, երիտասարդ մասնակցում էին տարբեր վարպետության դասերի, լուսանկարվում:

Օլիմպիադան ավարտվեց մրցանակաբաշխությամբ, ջերմ խոսքերի փոխանակմամբ, «Երագի երկիր Հայաստան» խորագրով կրող տոնական համերգով, որին



են ՌԴ, ՀՀ և Կուրբանի ազգային հիմները: Ներկաներին ողջունում են Կամո Հայրապետյանը, Կարինե Եսայանը: Կերջապես սկսվեց հայագիտության մրցույթ-օլիմպիադան: Մինչ օլիմպիադան իր ընթացքի մեջ էր, ուսուցիչները մասնակցում էին «Գրական հյուրասրահ» ծանոթություն — հյուրասիրություն: Կարևորելով ուսուցչի աշխատանքը ներկաները խոսեցին Միյուտընում առկա խնդիրներից, իրենց հուզող հարցերից, ծրագրերից: Մանկավարժ Կարինե Եսայանի խորհուրդներն ու առաջարկները սիրով ընդունվեցին բոլորի կողմից: Մինչ ժյուրիի անդամները (Կրասնոդարի ՌՀՄ կրթության բաժնի ղեկավար, հայոց լեզվի և հայագիտական առարկա-



— Հայագիտական օլիմպիադան ցույց տվեց ոչ միայն ուսուցիչների աշխատանքի և աշակերտների աշխատասիրության արդյունքը, այլև գնահատական տվեց մեզ հայ համայնքների ղեկավարներին: Մենք խոստանում ենք սիրով աջակցել հայապահպանությանն ուղղված բոլոր ծրագրերին: Շնորհակալություն ուսուցիչներին իրենց կատարած հայրենանվեր աշխատանքի համար, — ասաց Կամո Հայրապետյանը: Շնորհակալություն մեկենասներ Կամո Հայրապետյանին և Գրիգորի Սահակյանին, Կարինե Եսայանին, բոլոր կամավորներին, ժյուրիի անդամներին, ուսուցիչներին, հրուշակեղենի «Մետրոպոլիս» գործարանին: Շնորհակալություն և, Կրասնոդար: Մինչ նոր հանդիպում հայապահպանման սրբազան գործում: **Ծովինար ՍԱԳՍՅԱՆ**